

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան ֆրք 10
վեցամսեայ " 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՍ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրք 12
վեցամսեայ " 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՍ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հարստ օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիս: Երկու քիւ ա-
ռաջ հրատարակուած քերթը 40 Սանդիս:
Զհրատարակուած գրութիւնը եւ յօդուիր:

Հասցե
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA

Հայերի Վ. տարւոյ 50 թիւերը
մաքուր կազմեալ կը վաճառի, գին 10 ֆրք:

Կը շնորհաւորենք Տ. Կարապետ
հայրը եւ բոլոր Ռուսոմուրցիները, այս-
պիսի պատուական եկեղեցական մը ու-
նենալնուն համար իրենց մէջ:

ԱԶԳԱՅԻՆ

Ռուսոմուրցի Արժանապատիւ Տ. Կա-
րապետ քահանայ Պոյաճեան, այս առ-
գամ վարդապետական ականակուռ ՎԱՆ-
ՉԱԽԱՉ կրելու արտօնութեան կոնդակ
ստացած է նորին Ս. Օծութիւն Վեհ.
Հայրապետէն:

Տէր Հայրը իր անբասիր կեանքով
պարկեշտութեամբ ու համեստութեամբ
ըն սիրուած է ոչ միայն Ռուսոմուրցի հա-
յերէն, այլ եւ Պուլկարիոյ բոլոր հայա-
բնակ քաղաքներէն: Բաշ գրաբարագետ
մը ըլլալով, խոր հմտութիւն ունի նաեւ
ազգային կրօնական հին մատենագրու-
թեան եւ պատմութեան:

Տէր Հայրը ոչ միայն Պուլկարահայ
քահանայներուն մէջ միակն է, այլ եւ
հայ ազգի հազուագիւտ քահանայներէն
է:

Անցեալ կիրակի առաւօտ Վառա-
էն մեկնող Ռուսական շոգենաւով ի Կ.
Պոլիս մեկնեցան 217 երկոյն գաղթա-
կանք, իսկ երեքշաբթի օրը մեկնող Պուլ-
կարականով 195. Ընդամենը 422 հոգի:

Վառնաի գաղթական քահանային
Բ. տպագրութիւնը, գրեթէ միեւնոյն
պարունակութեամբ այս օրերս ի լոյս
երած է նաեւ Պուլկարիոյ մէկ ուրիշ քա-
ղաքին մէջ: Տեղւոյն շնորհունակ քահա-
նան, աղքատ ննջեցեալ մը գերեզմա-
նատուն առաւ նորդելու գծկամակելով,
կ'առաջարկէ մեռելատիրոջ թաղքուն մը
բռնել:

Խեղճ մեռելատէրը որ դրամ չու-
նէր, կը պարտաւորի կռնակէն բալթօն
հանելու կառավարին յանձնել իբր վարձք:

ու մեր տէր պապան ալ իբրեւ բաղմնալ ի կառս քերովբէականս գերեզմանատուն կերթայ:

Սիլիսդրէէն մեզ զրկուած երկու յօդուածները չպիտի կրնանք հրատարակել, մինչև որ անոնց առարկայ եղող անձնաւորութեանց իսկական անունները գէթ մեզի չիմացունեն. «Լիտտաբորեալ», հիւսիս, հարաւ» բառերէն բան մը չենք հասկնար, զոչ անունի տեղ գործածած են:

Լառմէնի իր Կ. Պոլսոյ թղթակցէն առնելով կրէ թէ,

«Հայ վաճառական մը յեղափոխական կուսակցութեան մը կողմանէ վերջերս ստացած է սպառնական նամակ մը, որ կը պահանջէ 25 օսմ. ոսկի ի նպաստ Ս. Գործին, հակառակ պարագային մէջ մահ սպառնալով»:

Լառմէնի կը յաւելու թէ «Հնչակեանները ու Իրօշակեանները մինչև հիմա հոյ աղբէն 50,000 ոսկիէն աւելի գումար մը կորզած են, իրենց դանակը անոր կսկորդին կրթնցներով. դեռ չի՞ բաւեր»:

ՀԱՅԵԼԻ — Ո՞վ գիտէ առաւ—փախաւներու ի՞նչ նոր ընկերութիւն մըն է այս, որ խաբէութեան ամեն միջոց սպառած, այս շահաբեր գրութեան կը դիմէ, որ երբեմն օրուան նորաձեւութիւնն էր մեր մէջ: Չանցա՞ւ դեռ այս մօտան:

Յայանի է թէ Պուլկարական «Սիլսո» անուն շաբաթաթերթը իր անցեալ չորեքշաբթի օրուան 11րդ թիւով հրատարակած էր երկու լրտեսական նամակներ ֆր. ք. ըստորագրութեամբ, որոնց մէկուն մէջ Տիգրան

ճգնաւորեանի անունը յիշատակուած էր: «Շարժում» այդ երկու նամակները հրատարակելէ ետքը, իր կողմէ խորհրդածութիւն մը ըրած էր աշագին ամբաստանութիւն մը ծանրացնելով Տ. ճգնաւորեանի վերայ: Այժմ այս վերջինը հետեւեալ յայտարարութիւնը կը յղէ մեզ, զոր կը հրատարակենք յանուն անկողմնակալութեան:

Հայ Ժողովուրդ,

Շարժում՝ Սիլսոն աշտատակելով Ֆր. ք. ստորագրութեամբ երկու նամակներ, — որոց միոյն մէջ ըսուած է թէ արտասահմանի թերթերը լռեցնելու կաշող անձը Տիգրան ճգնաւորեանն է, — զիս բացէ ի բաց դաւաճան կը յայտարարէ:

Ինքզինքս և աբաստանիչներս արդէն յանձնած ըլլալով արդարութեան ճանկը, աւելորդ կը տ'սնեմ ուրիշ միջոցներով ինքզինքս արդարացնելու ջանալ:

Առէն ճիգ պիտի թախեմ դատը հրապարակային ընել տալու, և կանխաւ հրատարակելով դատաւանի նիստերուն օրն ու ժամը, պիտի հրաւիրեմ զքեզ, Ժողովուրդ, ներկայ գտնուիլ դատավարութեան:

Մինչև վերջին շունչս պիտի աշխատիմ պատուելու վարադոյրը, որպէս զի բուն դերակատարները և դաւըմերկապարանոց ընեմ:

Մէկ կողմ թողլով պատժական օրինաց տրամադրութիւնները, որոց անշուշտ պիտի ենթարկուի յանցաւորը, պէտք է որ բարոյապէս կամ ես մահանամ, կամ իմ զրպարտիչներս:

Տիգրան ճգնաւորեան

Վառնա, 24 Մարտ, 1898

Յ. Գ. — Ներկայ յայտարարութեանէն մէյմէկ օրինակ ալ զրկած եմ «Իրաւունք»ի և «Շարժում»ի ի հրատարակութիւն:

Նոյն

«Սիլա»-ի խմբագրութենը իր 12րդ թիւին մէջ նշանակէ կը հրատարակէ հեռա-
եալ տողերը, զորս կարեոր կը համարինք
ներկայացնել հոս, նկատելով որ յիշեալ թեր-
թին խմբագիրը պարտականութիւն համա-
րած է կերպով մը հերքել այն կարգ մը
աննպաստ մեկնութիւնները, զորս ոմանք չենք
գիտեր ինչ թաքուն պատճառով կը հանեն
յիշեալ նամակներու բովանդակութենէն:

«Ստիպուած ենք յայտարարելու
թէ, մեր անցեալ թիւին մէջ՝ հրատա-
րակուած երկու լրտեսական նամակնե-
րով, մենք նպատակ ունինք միայն
զգուշացնելու Պուլկար և Հայ յիշակա-
նականները շատ մը լրտեսներէ, որոնք
վերջերս կը վխտան քաղաքիս մէջ՝ և ու-
րոնք աղատորէն կերթեկեն վառնա և
Պոլիս:

Մենք գիտաւորութիւն չունինք
բնա զնաոելու և մեքենայելու որու որ
ըլլայ, և մասնաւորապէս այն անձերու,
որոնք յիշուած են այս նամակներուն
մէջ, և որոնք մեզ անծանօթ են:

Յատկապէս Տիգրան ձգնաւորեան
անուն հայուն, որ մեր նամակներէ մէ-
կուն մէջ յիշուած էր, մեզի ամենաբա-
րի մարդու արձագանքներ տրուեցան,
զորս կը փութանք հաճութեամբ ար-
ձանագրել:

«Սիլա», Մարտ 12 թիւ 25

Մենք մեր գատաւանը չենք կրնար
հրապարակել, մինչև որ զօրաւոր և անվիճե-
լի փաստեր չի գտն հաստատել բացորոշա-
պէս այն ծանրակշիռ ամբաստանութիւնը,
վասն զի հարեանցի ակնարկ մը խել կը բա-
ւեր հասկնալու համար թէ այդ նամակնե-
րու գոյութիւնը միայն բաւական փաստ չէր
կրնար սեպուիլ դաւաճանութեան մը գոյու-
թիւնը հաստատելու, և թէ քիչ մը գծուա-
րին էր առաջին վայրկեանէն որոտագոյ վը-
ճիւղով մը կտրել նետել ամեն բան:

Կը սպասենք ապագային:

»»

Երէկ առաւօտ «Շարժում»-ի առաջ-
նատէր Տիար Ղ. Թահմիսեանէ ստացած
ենք հետեւեալը.

Խմբագիր «Հայելի» Ազգային
Հաւաթաթերթի,

Ներկայիս կը փութամ յայտարարել
որ իմ պատասխանատուութեանս տակ հրա-
տարակուած «Շարժում» թերթի Յարգոյ խմբ-
ագիրը առանց ինչ նախապէս իմաց տալու
և իմ հաճութեանս ստանալու, իրենց թիւ
14րդ թերթի մէջ, ինձ բողոքովին անծանօթ
մի ազգայնոյ մասին, այսինքն Տիար Տ. Ճըգ-
նաւորեանի նկատմամբ հայ դաւաճան անունը
տուած են, ինչ որ հաստատելու համար չո-
շարիւրի փաստեր մէջ տեղ չի կան. հետեւա-
բար ետ առած եմ իմ պատասխանատու-
թիւնս ինչպէս նաև այս մասին անկեղծ ցա-
ւըս կը յայտնեմ Յարգոյ Տիար Տ. Ճընա-
ւորեանի և կը խնդրեմ որ հաճիք երկտողս
հիւանդակել Ձեր անաչառ թերթի մէջ, որոյ
մասին կանխաւ կը յայտնեմ խորին շնորհա-
կալութիւններս: Կը յաւելում նաև թէ ներ-
կայ թուականէս յետոյ իմ պատասխանա-
տուութեանս տակ «Շարժում» չի պիտի
հրատարակուի:

Ընդունեցէք իմ յարգանքները

Ղ. ԹԱՀՄԻՍԵԱՆ


27 Մարտ 1898

Վառնա

ԿԱՐԵՆՈՐ

Չեապիրներու հաւաքածոյի սիրահար
պարոն մը, նամակ մը գրելով խմբագրու-
թեանս, կը խնդրէ որ հրաւեր կարգան
հանրութեան, որպէս զի անոնք որ կուզե-
հաճոյք մը պատճառել յիշեալ պարոնին,
իրենց ձեռագիրէն կտոր մը հաճին զրկել
խմբագրութեանս հասցէին:

Աս Տիար Հ. Ծ. Մ. ի Ռուսձուգ — Ձեր
հասցէն չգիտնալնուս պատճառաւ քաղթ—
բութերնուդ պատասխանը Ձեր քեռայրին
հասցէին զրկած ենք: Դիմեցէք անոր:



ՀՆԴԿԱՅԱԻԸ

Անցեալ կիրակի, Ահնայ կամարակապ գիւղէն Յովհաննէս աղան իր քաղաքացիներէն Ունեփ աղբօր և տիրացու Ամբակումին հետ տեղւոյս հիւանդանոցի հրապարակը կը պտտէր:

Այս անձը մտադիր էր Վ. Պոլիս իր ընտանիքին քով վերադառնալու, ուստի կ'որոշէ նոյն օրը հնդկահաւ մը գնելով իբր նուէր հետը տանիլ: Բազարին ամեն կողմը աչքէ անցունելէ ետքը պուլկար գիւղացիի մը մօտ կանգ առաւ, որուն ձեռքը խոշոր հնդկահաւ մը կար:

— Պախսանա՛, էխտիեար, հինտիյի գա՞ջ զրուշա վերէճէքսին:

— Օտըմ լավա:

— Հէ՞. ի՞նչ կըսէ:

— Հոս եմ աղա կըսէ:

— Պապա՛, ո՞ր ես տէմէտիւք քի հոս եիմ տէյօրսըն, հինտիյի գաջա՞ վերէճէքսին:

— Եէտի ֆրանք:

— Եէտի ֆրանք մի՛. . . օթուզ պէշ զրո՞ւշ. . . պիզիմ մէլմէքէթտէ պիր խօյին վերիւրլէր. նէ իսէ չօխ տուր ամա՛ տասնը հինգ բոլոր վերէյիմ:

Գիւղացին. — Քուա՞ք. քուա՞ք:

— Կերած ապուրը նայէ, տես ի՞նչ կըսէ:

— Քուա՞ք:

— Նէ աղզընը պօզիեօրսըն. պու բազարլըն տըր. հըմայեկս գլխուն բան մի տի զարնեմ ու դժոխոց արժանանամ:

Բարեբախտաբար տեղացի հայ երիտասարդ մը որ այն միջոցին անոնց մօտէն կ'անցնէր. «քուաք բաւին նշանակութիւնը ակընցիներուն բացատրելով սակարկութիւնը կընէ

և Յովհաննէս աղան հնդկահաւը կը գնէ 4 ֆրանքի:

Հազիւ թէ բազարէն բիշ մը հեռացած էին, իրենց բարեկամ Արաբկիրցի Մամաս աղան դիմաւորեցին:

— Աա՛յ, Օվընէս աղա, ապ հինտին ո՞ւմ տանիս ր նը:

— Էֆէնտըմ, Ըսթընպօլ գնալու խափըլ ուխարարը տուանք իսէ՛ նիյէթ արի ուր մեր քեօր օղլին ալ հինտի մի հէտիյէ տանիմ:

— Ասօր եթա՞ս տի:

— Հըպա ի՞նչ տի անիմ. հէսպէլ հիւսապ տի երթանք, չօլուխ չօճուխ ֆէօն, ես ֆէօս, հիսապ քիթապ արի ուր աս ճամբան չի տի ելլէ. պինաէն ալէյհ, սէլամէթ գընալը մեր հասուն խայրըլու է. էկէր Ատուածութիւնն էնկէլ մի չի հանէ իսէ՛ աս աւուր բաբօրով տի երթամ: Մնաս բարով Մամաս աղա:

— Երթաս բարով Օվընէս ալա:

Եւ Մամաս աղան հեռացաւ:

Ունեփ աղբար, որ հնդկահաւը ձեռքը բռնած էր, անոր ոտքին կապերը քակելով, թող տուաւ:

— Մէնչուկ, Ունեփ, ի՞նչ կանիս:

— Ի՞նչ թափուր տի անիմ ուր, անխաար ծայր է քի թէս ինկաւ, թող առջևնուս քալէ:

— Ատ տահա բարով կուլլի, պախուսուս ճամբան կ'արծուի, հաղըր եէմի ալ փարա չինք սար:

Ու քը՛շ քը՛շ ըսելով հազիւ թէ բանի մը քայլ յառաջացան, ահա հնդկահաւը մօտէն անցնող սայլի մը աղմուկէն խրչտելով թռաւ գնաց տանիքի մը վրայ կեցաւ:

Այս անակնկալը Ահնցիներուն վրայ անախորժ տպաւորութիւն մը առաջ բերաւ. սկսան մանր քարեր տեղացնել տանիքին վրայ որպէս զի՛ հաւը վար իջեցնեն. բայց կամակար կենդանին թռաւ աւելի բարձր տանիքի մը ծխնելոյզին վրայ: Այս անգամ Ունեփ աղբար, խոշոր քար մը վերցուց և նե-

տեց հնգկահաւին թառած կողմը, բարը ին-
կաւ բուխերիկէն վար ու նոյն միջոցին տա-
նը մէջէն աղմուկ մը լսուեցաւ. տեղացի պա-
ռաւ. կնիկ մը դրան սեամին վրայ երևնալով
սկսաւ նախաախնք տեղալ Ակնցիներուն գըլ-
խուն:

— Ի՞նչ կու ճշուրդտես պէ կնիկ, պո-
ռաց Յովհաննէս աղա բարկացած: Տիտէ-
թին նէ՞ տիւր:

— Օնուշտան կէտընըդ պուրայա քի
պաշըմըդ պէլա օլասընըդ. թէնճիրէմի գըր-
տընըդ, օճաքտա փիշէն ֆասուլու տեօքտը-
նըդ, հաչան պէօլէ եաբտընըդ, լազըմ՝ փա-
րայը վերէսինիդ:

— Նէ՞ տէտին, նէ՞ տէտին ատ պամ-
պակը էօնկըճէդ հանէ. պիդ նէ՞ եաբտըն.
պիդտէ խապիէթ եօխ, իշթէ հինտի քիրա-
միտ տիւշիւրտի, հէփ խապիյէթ օնտա:

— Փարայը վերմէլի, պէշ լէֆ իսթէ-
լըմ, հաչան իսթէմէսըդ վերմէք՝ շինտի ճան-
տարա վերիբիմ սիդի:

— Հըմայեկս ի՞նչ թավուր տի անինք,
Ամբակում աղա:

— Պիր բարա վերմէզիւք, վէսէլամ:
Հաղիւ թէ Ամբակում աղա այս բառերը
արտասաներ էր, պառաւը շըռա՛ն ապտակ
մը իջեցուց անոր երեսին:

— Ունե՛փ, վազէ՛, հունայեկը ճէնտեր
մը կոյնը է:

— Զաթը ան ալ տեսաւ ասկի դանս
կուգայ:

Ժանտարը դէպքին մանրամասնու-
թիւնը տեղեկանալէ ետքը հնգկահաւը պա-
ռաւին կը յանձնէ ու Ակնցիներուն դառնա-
լով, կըսէ.

— Հայտէին կիտէճէիդ:

— Աօփսոթին, պիդի նէրէյէ կէթիւ-
րիրսըն:

— Ուչասթա.

— Իւշ հասթա մը. պիդ խասթա տէ-
կիւլիւք:

— Հասթա տէյիլ, ուչաստ.

— Էվէթ, աննատըմ, ուչտի, տէյօր-

սըն, իշթէ պուրտան ուչտի, օրտան չըխտի,
բուխուրիկի երխտի, մէրճիմէկի տեօքտի,
պիդիմ հինտի էլտէն չըխտի:

— Հոյտէ՛, մարշ, ըսելով ոստիկանը
զանոնք մինչև պահականոց կը տանի. բարե-
բախտաբար Ակնցիներուն բարեկամ խոհարար
Արթին աղան մօտակայ արձարանը գտնուե-
լուն՝ պաշտօնեանին կը դիմէ ու անոնց հա-
մար բարեխօսելով, կը խոստանայ նաև պա-
ռաւին փեսային հատուցումը ապալ:

Երբ պահականոցէն կը մեկնէին, Ժա-
մը 3ն էր ու շոգենաւը կը սուլէր:

— Ունե՛փ, պօճախներդ բաց, իշթէ
կէմին կու պոռայ.

— Պօճախներդ չէ՛, ձեռքերդ բանաս
ու հինտին պէս թուիս պիլէ իսէ՛ չի տի
հասնիս բաբօրին:

— Չըսի՞ս ուր մեր ասօրուան Ըսթընպօլ
գնալուն էնկէլ էղաւ աս անիծած հինտին:

Ու արդարեւ նոյն օրը Յովհաննէս ա-
ղան չի կըցաւ մեկնիլ ՚ի Պոլիս:

Օ—Բ

ԶԻՆԱՍՏԱՆԻ ԲԺԻՇԿՆԵՐԸ

Զինաստանի մէջ, ուր տարօրինակ բար-
բեր կը տիրեն, բժիշկները սովորութիւն մը
ունին եղեր, այն է իրենց դրանը վրայ կա-
խել այնքան թուով լապտերներ որքան իրենց
յաճախորդներէն մեռածներ կան:

Թինկ—Շանկ—Չու, երկնային կայսրու-
թեան նախարարներէն մէկը, անցեալները
անհանգստութիւն մը զգալով, սպասաւորը
կը զրկէ բժիշկ մը կանչելու, պատուիրելով
դիմել անոր՝ որ ամենէն քիչ լապտեր կախած
ըլլայ դրանը վրայ:


Քիչ մը վերջը ծառան կը վերադառնայ
բժիշկի մը հետ:

— Ահա տէր իմ, կըսէ, ձեզի բժիշկ
մը, որ իր դրանը վրայ մէկ լապտեր միայն
կախած էր:

Հիւանդը ինքզինքը ցուցնելէ և գեղա-
գիրը առնելէ վերջը կը հարցնէ :

— Նե, նեքէք Տօթթօր, ո՞րքան տտեն է
որ քաղաքիս մէջ հաստատուած էք :

— Երէկունէ ի վեր :



ԲԱՌԵՐՈՒ Ի ՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Խլալուղ — Հողի վառող :

Կաթուած — Փառաւոր մահ :

Սրճարան — Պարապ պատողներուն
գլխալը :

Դրախօմա — Աղջիկներուն արժ. քը :

Դեղագիր — Մահու և կենաց ան-
ցագիր :

Բամբասանք — Կանանց առօրեայ
աղօթքը :

Շրջազգեստ — Փողոցի փափկիկ ա-
ւել :

Գլխիչ — Մտքին լոգօսութիւնը :

Նամակ — Խորհրդապահ ծառայ :

Աքաղաղ — Աղքատին գիշերուան
ժամացոյցը :

Ճշմարիտ բարեկամ — Քոակը :
Հ

ԽԱԲԵՍԽՈՒԲԵՍԱԿԱՆ

Կատակերգութիւն 2 Պատկերով

Պատկեր Ա.

(Կէս օրէն առաջ)

Պարոն մը, որ խարէսխուբէսի առաջին
կարգի շքադրամը կուրծքէն կախած, կոշկա-
կարէն չաքէթ մը, բժիշկէն գլխարկ մը,
ալպէնիէն բանթալոն մը ու արձանագործէն
ալ գոավաթ մը շորթելով պարահանդէսի
գարիգաթուռու գօսթիւմ մը շինած ու հա-
գած էր, անցեալ օր տեսնուեցաւ սրճարա-
նին մէջ, ամենուն ուշադրութիւնը իր վրայ
հրաւիրելով :

Պատկեր Բ.

(Կէս օրէն ետքը)

Հիմա ալ ամենօրեայ զիպխիական հա-
ղուստ մը հաղած, կուրծքին վրայ միշտ նոյն
շքադրամը, ու ձեռքն ալ գինիի գաւաթ մը
ողորմութիւն կը հաւարէ սրճարանէ սրճա-
րան, ի նպաստ Պոլիս գացող անանուն եւ
անգոյ աղօթող գաղթականներու համար :

(Վարագոյրը կիջնէ)

Բ. Ի. Բ

Պատանմըչեան



Օրհնած, կըսէ քահանային մէկը
օղիամոլ մէկուն, որ միշտ շիշը հետը
կը կրէր և այնչափ կը սիրէր, որ ճամ-
բան գացած ատենն անգամ կը կլլէր.
ինչո՞ւ այդ աստիճան կը սիրես օղին, որ
թէ քսակիդ և թէ անձիդ ոխերիմ թըշ-
նամի է :

— Աղէկ ըսես ա՛հա, տ՛ր հայր,
ես աւետարանին պատուէրը կը բռնեմ
կոր :

— Ի՞նչպէս :

— Միթէ չը՛սեր, «Սիրեցէք զթըշ-
նամիս ձերդ» :

Տօթթօր մը իր սպասուհւոյն :

— Մարիամ, եթէ բարեկամս, Յա-
կոբ աղան գայ զիս հարցունէ, ըսէ որ
ժամը տասնըմէկին պիտի վերադառնամ :

— Եթէ ձեր բարեկամը չի գայ,
ի՞նչ ըսեմ :

Հարուստ սեղանաւոր մը կը համցնէ իր սպասաւորին :

— Պարսա՛նա Գէորգ , պոգալըմ՝ պու քատիկոտէ նէ՞ քէստիրտին :

— Էֆէնտիմ , իբի բարչա շէյ :

— Նէ՛ , նէ՛ :

— Պիլի սափօմուն էթէքլէրինին բիւ-րիւլլէրի , տիկէրի տէ սայէնիզտէ էվլէնէ-ճէք իւմիտիմի :

— Քա Մարեհէնէ տուտու , երեկ իրի-կուն տղաս խալէթային մէջ բան կարդաց քի՛ ի :

— Ճանըմ՝ ինչ էր նէ ըսէ հոգիդ կը սիրես նէ :

— Վո՛ւյ , բէք բէք աղէկ բան , Ամէյ-գա կըսեն կոր տեղ մը կայ եղեր , հոն մա-քինայէ մարդեր շիներ ին բի , մեղի պէս կը բալեն կը խօսին եղեր :

— Քուրուկ , աճապա ատոնք աղջիկ առնեն նէ , դրախտումայով պիտի առնեն , անիկայ ալ հասկցա՛ր :

Յորենի պօրսային մէջ մարդ մը անցած օր իր բարեկամին հարցուց .

— Բարեկամ , այսօր բիացան ի՞նչպէս կը տեսնես .

— Հաս պաղ .

— Անանկ է նէ ինչո՞ւ համար ատանկ բարակուկ սէդրիով մը կը պտտիս կոր .

Յաճախորդ մը կը հարցունէ խանութ-պանի մը աշկերտին .

— Վարպետդ ո՞ւր է .

— Գուրս ելաւ .

— Հուտ պիտի վերադառնայ .

— Ոչ , այս միջոցիս շատ գործ ունի , հօրեղբայրը կը մեռնի կոր :

ՆՈՐ ԷՏԻՍԸՆ ՄԸ

Ժամանակիս ամենամեծ գիւտերէն մէկն ըրաւ լեհ . երիտասարդ ուսուցիչ մը՝ Յովհ. Շէնպանիկ : Տեղեկհրոսկոպ (ելեկտրական հեռատես) : Մղոններով հեռու պատկերներ , տեսարաններ , պիտի ներկայացուն յայ հե-

ռատեսով՝ իրենց բնական գոյներով , շար-ժումներով եւն : Արդէն Գաղիայի 1900ի Յուլիոսհանգիսի վարչութեան հետ դաշինք դրած է այս երիտասարդ գիտնականը (հա-վիւ դեռ 27 տարւան է) , եւ առաջին ան-գամ՝ ի Պարիս հրապարակ պիտի ելլէ ժյո նոր գիւտը : Հետաքրքրական պարագայ մըն է գիտնալը թէ հեղինակը՝ գիտութեանց խըր-թին տեսական վարդապետութիւններէն ա-ւելի՝ օգտուած է — ժիւլ Վէրնի գիտ-նական վեպերէն : Յուլիոսհանգիսին մէջ պափլիոն մը պիտի կառուցուի , եւ օրը երեք անգամ Պարիսի Օպերայի ներկա-յացուցումները պիտի փոխադրուին այս պա-փլիոնի մէջ : Հանդիսականք պիտի ունենան իրենց ականջին վրայ հեռաձայնի գործիք մը իսկ աչքին առջեւ՝ հեռատեսը , որով Օպե-րայի գերասաններու թէ՛ շարժումներն պի-տի տեսնեն եւ թէ՛ ձայնն ու երգը պիտի լսեն : Եթէ ստուգուի « նոր Էտիոնի » այս գիւտը , այն ատեն հեռադիրը կատարած պիտի ըլլայ այլ եւս իւր պաշտօնը :

ՀԱՆԳԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ

ԱՌԹԻՍԹԻԲ

Դ.Պ.Թաղ Թիւ 213 Վառնա

Լուսանկարչատանս մէջ մեծ խնամքով կը պատրաստուին ամեն ապագրանք . թաշկինա-կի , այցաքարտի , ապակիի , տախտակի եւ մարմարեոնի վրայ գեղեցիկ եւ բնական լու-սանկարներ , աղանախամաններ , մինիաթիւ-ներ գունաւոր պատկերներ եւայլն :

Երկու երկվեցեակէ աւելի ապագրողներ իրենց պատկերներն թաշկինակի վրայ լու-սանկարուած նուէր կընդունին :

Փափաքողներու մասնաւոր դասեր կը տըր-ուին :

Որոշեալ գնոյն կեսը իբր կանխավճար չ'առ-նուած ոչ մէկ ապագրանք կը պատրաստուի :

ԴԻՆ ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ

Վ. Քիւչիւքեան

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԻՐԱԿԱՆ ԳԵՊԵՐ

Ա. Փիլիկ աղբոր հարսնիքը
 Բ. Թապալաքեալ վարժապետը
 Գ. Խաբուած Ակնցին.

Ընթերցասէրներու փափագին համաձայն սոյն երեք ծիծաղաշարժ գէպքերու հաւաքածոն, որ աւելի քան 200 էջերէ պիտի բաշկանայ, արդէն մամուլը յանձնուած ըլլալով, բաժանորդագրութիւն մը բացուած է: Գինն է 1½ ֆրանք: Հրատարակութիւնը ամբողջապէս ետքը պիտի վաճառի 2 ֆրանքի: Այս առթիւ շրջաբերութեան հանուած բաժնետոմսը յառաջիկայ Մայիս 1 ին Վառնայի մէջ «Հայելի» իւրմբագրութեան, իսկ գաւառները անոր Պատ գործակալներուն ներկայացնողը պիտի ստանայ սոյն դրքէն մէկ օրինակ, կազմեալ:



ԳԿԻՇԱԿ
 Ա. ՊԱԳԱՅԻ

կամ Զուարճալի Բաղդադցոյ
 Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց զբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով գիմել մեր խմբագրութեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐ ԿՈՒԹԻՒՆ

ԷՐԲԷՅԻՆ ՖԷՆՏԻ

ԿԱՐԸՅԸ ԵՆՆՏԻ

Գըլ կէճէլէրինէ մախսուս զայէթ կիւիւնճլի վէ էյլէնճէլի իշպու գօմէտի 32 սահիֆէտէն իպարէթ օլուպ, հրուֆաթը էրմէնիճէ վէ լիսանը թիւրքճէ օլարագ Վարնաստա

թիւթիւնճիւ տիւքքեանյարընտա 30 սանթիւֆիաթլէ սաթըլմագտա տըր: Թաշրալարտան իսթէյէնլէր հալընըզ 30 սանթիւլիք բօսթաբուլը զիրտէ մուհարրէր նամըմա կէօնտէրմէլի տիրէր.

Մ. ԽԱԶԻԿԵԱՆ, 2 հմի Ուշասթ, 1104

ՎԱՌՆԱ

Պունտան պէօյլէ սաիր էյլէնճէլի վէ ֆախտէլի գօմէտիլէր տախի բէյտէրբէյ նէշր օլունհաճաղը պէյան օլունըր:

Վաշիկեանական Տպագրութիւն

ԱՅՅԵՏՈՍՍԻ

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի և աճր տուիին մէջ կը գտնուի Այցեստմսի գործնաժողովեան հրահանգը պարունակող տէտրակ ծը, որուն կողքին վրայ այցեստմսին տիրոջանունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 սանթիմյաւճնարարողին վրայ է: Դրամի փոխարէ՝ Պոլկարական 5, 10 եւ 15 սանթիմնաց նոսկագրօշմ կ'ընդունուի: Կանխիկ:

ԵՐԳԱՐԹՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈԲԲԻԿ ՏՂԱՅՈՑ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առաջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով, կը պարունակէ մանկական զուարճալի երգերու քանի մը ոտանաւոր առակներ և կրնայ երախայներուն ծառայել նաեւ իբր ընթերցանութեան գիրք որուն պարունակութիւնը երօսեցուցիչ և հրահանգիչ է միանգամայն անոնց համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մաքուր և կազմը վայելուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան,

Չրգ. թաղ, թիւ 1104:

Оговоренъ редакторъ: Н. Драгулев

Печатница «Взаимность» — Варна.